

ՄԱՐՏ

ՊԱՏՐԻԱՐԷԱՐԱՆԻՆ

ՏՐՈՒՄԸ ԳՈՂԱՅՈՒՄՆԵՐԸ

Օրմանեան պատրիարք քանի մը շաբաթ իր բնակարանը փակուած մնալէ յետոյ նորէն Գուժ-Գաբու վերադարձաւ։ Պերճախօս բարոյով մը ոգևորեց ժողովուրդը հաստացնելով թէ սուլթանին իրատէն որ գոհացում կուտար Պատրիարքարանին կարգ մը պահանջումներուն, ամենալուրջ սկզբնաւորութիւն մըն է բարենորոգումներու գործադրութեան։ Յնձաց ժողովուրդը, սրտազեղ երախտագիտութեամբ յորդեցաւ Պոլսոյ մամուլը, ու երկիրը եւ արտասահման բազմաթիւ եղան այն Հայերը որ հաստացին թէ պայծառ օրերու աւետաւոր ծիրանի դօտին է որ կը պարզուի արիւնդող Հայաստանի վրայ։ Ու երբ դեռ պատրիարք եւ ժողովուրդ զիրար կ'ողջաւորէին, տակաւին իրարու զրկէ չբաժնուած, ահա թալանի զարնուած երկուող հեռագիր մը յուսախաբութեան ահազնութիւնը կ'ստիպէր կուտայ։ «Պատրիարքը դաժնապէս կը գանգաւի թէ սուլթանին իրատէն գաւառներուն մէջ մեռեալ տառ կը մնայ»։ Լակոնական զեկուցումը կը հաստատէ թէ Հայոց պատրիարքը անգամ մը եւս ամենալրբենի խաբեբայութեան մը գործիքն է եղած։

Ո՛չ մենք, ո՛չ մեզի հետ եղողները պիտի ապշած մնան ի լուր այս տեղեկութեան։ Այս էջերուն մէջ իսկ ցոյց տուինք որ անհերքելի ինքնախաբէութիւն է մտքէ անցնել թէ ո՛ր է մանր մօտը զիջողութիւն կրնայ Հայոց վիճակին մէջ փոփոխութիւն մը մտցնել, եթէ երբեք գործադրուի իսկ, ինչ որ անկարելի է։ Այս էջերուն մէջ էր որ պատրիարքին յիշեցուցինք թէ իր պարտականութիւնը շատ պարզ է, և ամենագիւրջին կերպով գործադրելի։ Ընկելը ուրիշ բան մը չունէր բայց եթէ Հայաստանի վիճակին ամբողջ իրականութիւնը պարզել այն յանձնաժողովին առջեւ, որ սուլթանին իսկ իրաւունքը կազմուած էր քննելու համար Պատրիարքարանին պահանջումները։ Ու միայն այսօրուան, ու միայն երէկուան դաժնապէս իրականութիւնը չէր որ պատրիարքը պարտաւոր էր առանց ո՛ր է ծածկոյթի տարածել ամենուն աչքին առջեւ։ Կէս դարէ ի վեր պատրիարքարանէն Գուժը տեղացած թաքերիներուն հաւաքածոն Օրմանեան պատրիարք տանելու զեռնգելու էր յանձնաժողովին գրասեղանին վրայ։ Ու անգամ մը եւս պիտի հաստատուէր և մոռցողներն ալ պիտի յիշէին, թէ Հայոց բողոքները յանկարծածին, վաղանցուկ զայրութեւ չեն ծնած, ո՛չ, անոնց ծնունդին թուականը պէտք է երթալ փնտռել Գոժէ կէս դար առաջուան արձանագրութիւններու տուածին մէջ։ Բայց Օրմանեան պատրիարքը ո՛չ հեռաւանդներուն, ո՛չ թիւրքական իշխանութիւնը հիմնապէս ճանչցողներուն, ո՛չ ալ իր երեք տարուան անձնական փորձառութեանը ուղեց կարեւորութիւն ընծայել։ Միայն և միմիայն Տատեան Աթոլին փաշային հըլէ կամակաւարտը եղաւ, առանց և ոչ իսկ յիշելու թէ այդ տխուր անձնաւորութիւնը տասը տարի է որ Հայոց ձայնը Եւրոպայի առջեւ խղիւղուէր, Հայաստանի բարեկարգութեան հարցը Եւրոպայի ինչպիսիք օրակարգէն վեր-

ցընել տալու քաղաքականութեան ամենախտահելի, և բանք, ամենայնաւոր գործիքն է եղած սուլթանին ձեռքերուն մէջ։

Երբ պատրիարքը հոկտեմբեր 11ին իր աթոռը վերադարձաւ, մենք արտասահմանի Հայոց յանձնարարեցինք հանդէպ կատարուած գործողութեան մը սպասողական զիրք բռնել։ Մեր խորհուրդները ամփոփեցինք «ո՛չ կեցցէ, ո՛չ անկցի» բանաձեւին մէջ։ Օրմանեան եպիսկոպոսը պարզամիտ եկեղեցական մը չէ, ուստի ուղեցինք ենթադրել թէ ազդին կացութեան ամբողջ ծանրութիւնը բմբռնած է, իր հրաժարականին քաղաքական կարեւորութիւնը կշռած է, և նոյն իսկ իր անձնական օգուտը նախատեսած է, և բոտ այնմ կը վարուի։ Սուլթանին կրկնակի թախանձանքներուն դէմ Հայոց պատրիարքին «ո՛չ կարեմք»ը մինչեւ աստիճան մը կրնար մեղի յուսադրել թէ Օրմանեան պատրիարք այս անգամ լուրջ երաշխաւորութիւններ ստանալով կը վերադառնայ իր աթոռը։ Խաբեբայութեան մը կատարածը, մինչև իսկ ապահովութիւնը ունենալն ալ ներքի էր, բայց կը խոստովանէր թէ չէինք սպասել որ պատրիարքը ոտքը իր պաշտօնատունին ներս դրած բոլորին իսկ սուլթանին լրբութիւնը իր ամբողջ մերկութեամբ երեւան պիտի դարձնէր։ Թալանի երկուող հեռագիրը արդէն ո՛ր է տարակոյս չէր թողար երբեք զիտաւորութեանց մասին։ Եւ ահա նոյեմբեր 13ի անգլիական թերթերը Բիթերի գործակալութեան հետեւալ հեռագիրը հրատարակեցին։

«Թէև գրեթէ չորս շաբաթ առաջ իրատէ մը ելաւ որ Հայոց պատրիարքին գանազան պահանջումներուն գոհունակութիւն կուտար, բայց հայկական գործերը գոհացուցիչ յառաջդիմութիւն չեն բերած։ Պաշտօնեաները համոզուած են թէ եղած զիջումներուն գործադրութեանը դէմ որքան շատ արգելք յարուցանեն, Սուլթանին փաշայանքներուն համեմատ վարուած կ'ըլլան։ Նահանգային իշխանութիւնները այնպէս կը մեկնեն թէ ճամբորդներու առջեւ յարուցուած արգելքները ջնջելու համար արուած հրամանը յօգուտ վաճառականներուն է։ Անցեալ օր Պրուսիայէն տասնը ութը վաճառական Պոլիս երթալու արտօնութիւն խնդրեցին։ Կուսակալը ասոնք իր առջեւ կանչեց և յայտարարեց թէ այն վաճառականները որոնք Պոլիս ճամբորդելու ծախք մը կաւորդ են ընել, եւ որոնք գործերը իրենց բաժին չափ կարելու են, կրնան նաեւ աւելի մեծաբանակ տուրք մը վճարել։ Հետեւաբար այս բոլոր վաճառականները տուրքի դատապարտեց և անոնցմէ մէկուն միայն հրաժան տուաւ Պոլիս երթալու։

«Վաճառականներն մէջ հանրաժանօթ ըլլալու ցեղապէս Հիւսէին և Էմին փաշաներուն գործած հարստահարութեանցը համար բացուած պաշտօնական ընտելութիւնը կը հաստատէ այդ երկու զիրարներուն վրայ ծանրացած ամբաստանութեանց մեծ մասը։ Սակայն Հիւսէին փաշա ուղեւոր որ ինքզինքը չըմեղացնէ, ելաւ կարծական գնաց, գաւառակին գլխաւոր քաղաքը։ Հոն ժողովքի կանչեց տեղւոյն առաջնակարգ Հայերը և անոնց հրամայեց ստորագրել տեղեկագիր մը որով գոհունակութիւն կը յայտնուէր Հիւսէին փաշայի վարմունքին համար, և երախտագիտութիւն՝ իրենց վրայ տարածած պաշտօնականութեանը մասին։ Մօտակայ զեղէ մը եկող Հայ մը ըսաւ թէ կնիքը տունը ձգած է, և հրաման խնդրեց երթալ և առնել ու բերել։ Մարդը ճամբան սպաննուեցաւ։ Հիւսէին փաշայի ծառաներէն։ Միւս Հայերէն

ոչ մէկը տեղեկագիրը ստորագրելու համար ո՛ր է զիտաւորութիւնը ըրաւ։»

Հեռագրին պարունակութիւնը ապշեցուցիչ նորութիւն մը չի յայտնել, պարզապէս կը յիշէ նմուշ մը այն հազարաւոր ու բիւրաւոր ուղղակի կամ անուղղակի հարստահարութիւններէն, այն անթիւ անհամար խաբեբայութիւններէն որոնք Հայաստան եւ հայաբնակ ամէն քաղաք ու զիւր կը գործադրուին հովանաւորութեամբ սուլթանական իրաւունքներուն։ Բոլոր թիւրք պաշտօնեաները, ստորագրածն մինչեւ յետին ոտակները, զիտեն թէ ինչ գաղանի միտք ունին այն իրաւունքներ որ Հայոց կոտորածը իրենց հրամայող Սուլթանին կը բղխին։ Հայոց պատրիարքին ձեռքը արուած իրաւունքներ որոնց պարունակութեան գործադրութիւնը թիւրք պաշտօնեաները պիտի ըլլան, կը նմանին այն նամակներուն զոր կատակաւորները ապրիլ 1ին կուտան պարզամիտներուն ձեռքը և զանոնք իրենց բարեկամներուն կը զրկեն։ Նամակը յանձնարարական մըն է, զայն ներկայացնողը մինչեւ իրիկուն խաղցնելու համար։ Խեղճ մարդը մէկ գոնէն միւսը կը զրկուի, մինչեւ որ ուշ առնեն, ա՛յ երբ հոգին բերանը եկած է, կ'անդրադառնայ, կամ զինքը կ'անդրադարձնեն թէ խաբեբայութեան մը զոհն է։ Յաջորդ տարին միկնոյն միւսմիտը դարձեալ միկնոյն խաղին կուգայ միկնոյն անձերէն, առանց երբեք խառնուելու։ Ահա երեք տարի է որ միկնոյն Օրմանեան պատրիարքը պարբերաբար այդ միկնոյն խաբեբայական նամակը որ իրատէ կը կոչուի Աթոլին փաշայի ձեռքէն կը ստանայ, եւ բիշ մը վերջը կ'անդրադառնայ թէ զինքը խաբեր են։ Ու խաղը կը կրկնուի առանց տարուան մը չըջանին բոլորմանը սպասելու։ Պարզամիտ մը թիւրքիոյ Հայոց պատրիարքը։

* * *

Բայց Հայոց պատրիարքը պարզամիտ մը ըլլալ թէ հեռաւանդ ըլլալու մը, հայրենասնուէր մը թէ դաւադիր մը, ինչ անուն որ կ'ազդէ թող կրէ, միշտ մահաբեր պիտի ըլլայ հայկական դատին որքան առնեն որ Տատեան Աթոլին փաշա Հայոց պատրիարքին վրայ զերիշխան ազդեցութեամբ կը ներգործէ։ Յարութիւն փաշա Տատեան վարչապետ ըլլալ թէ սոսկական անհատ մը որ իր տունն է առանձնացած, միշտ ազդին հոգեբանական բուպէներուն Սուլթանին կողմէն իբր հոգեհան Աղաբալ կը վազէ կը ուսանի Պատրիարքարանին վրայ։ Այս վերջին տասը տարիներս ո՛չ մէկ Հայ որ Դրան գործակատարն է, Տատեանին չափ գաւաճանած է հայկական դատին։ Այս առթիւ անգամ մը եւս հայ ժողովրդին յիշողութիւնը արթնցնենք։

Աթոլին փաշա 1890 օգոստոսին յաջողեցաւ համոզել Ալեքեան Խոսրէն պատրիարքը որպէս զի սուլթանին խոստումներուն հաւատք ընծայելով իր հրաժարականը ետ առնէ։ Կետութիւնները Հայաստան և Պոլիս յեղափոխական շարժում մը տեսնելով կ'ընտան ու գուցէ վտանգաւոր ապագայ մը կը վախճային Արեւելեան խնդրին համար։ Ուստի կը պահանջէին սուլթանէն կարգ մը բարենորոգումներու գործադրութեամբ գոհացնել Հայոց Պատրիարքարանը։ Միկնոյն առնեն Յունաց պատրիարքն ալ բողոքախառն հրաժարականով մը իր աթոռէն քաշուած կը մնար, և յոյն եկեղեցիները փակէին։ Սուլթանը կը վախնար որ քրիստոնեայ երկու ժողովուրդ-

ներուն պետերը երբ հրաժարած մնան՝ Հայոց եւ Յունաց զաւթակցութիւն մը կրնայ կազմուիլ ու Եւրոպայի առջև հզօրապէս խօսիլ ի պաշտպանութիւն բարեկարգութիւն. ներս եւ քրիստոնեայ առանձնաշնորհմանց դատին։ Թող չտալ որ Հայերը եւ Յունները միանան, ու առանց ո՛ր և է գոհացում տալու Հայոց պատերազմը զոհացնել, ահա ինչ էր սուլթանին ծրագիրը, որուն գործադրութիւնը յանձնուեցաւ երեք անգամէ բաղկացած յանձնաժողովի մը։ Սակայն Յակոբ փաշա եւ Վահան Էֆէնտի չկրնալով, կամ աւելի ճիշդը՝ չուզելով խեղճ պատերազմ մը խաբել, եւ անոր հետ իրենց տարաբաղդ ազդը նոր թակարդի մէջ ձգել, շուտով հրաժարեցան իրենց յանձնուած ազդադատ պաշտօնէն։ Արթին փաշա յաջողեցաւ միտ միմակ յաղթանակը տանել, որով արգելեց Յուլիս 15ի շարժման արգելաւորը ըլլալու էն մեծ պատեհութիւնը։ Հայաստանի բարենորոգմանց դատին աղետաբեր օր մը եղաւ 1890 օգոստոս 17ի ուրբաթը ուր իրիկուան միջին Տատեան ցնծալին Երբազ վազեց և իր տէրոջը աւետեց թէ այլեւս վախճալու բան մը չունի։ Այն ո՛չ պետութիւնները պիտի կրնային պնդել Հայաստանի բարենորոգումներուն համար, եւ ո՛չ ալ Հայոց եւ Յունաց զաւթակցութիւն մը հնարաւոր էր, զի ինքը Տատեան յաջողած էր Հայոց պատերազմին հրաժարականը ետ առնել տալ երկու ամուսնան պայմանաժամով։ Այս ժամանակահատիցը սուլթան Համիտին բուական էր, եւ շատ իսկ, իր հակահայկական խորհուրդներուն իրագործմանը համար։

Կոտորածներէն յետոյ բարենորոգմանց խնդիրը նուրէն կը յուզուէր. այս անգամ Յրանայի հանրային կարծիքն ալ արթնցեր էր. արտաքին գործերու նախարար Պ. Հանօթօ շատ նեղ կացութեան մէջ էր սուլթանին հետ մէկտեղ, Նորէն Մեծ-Մարգարայանը աչքերը Մեծ-Խաբեբային վրայ յառեց։ Տատեան երեւցաւ, մանր մունր կտրուկութիւններ ըրաւ, ժողով դուժարեց, պատերազմը ընտրել տուաւ, գործադրեց այն բոլոր միջոցները որոնք առանց Հայաստանի վիճակին մէջ ո՛ր եւ է փոփոխութիւն մը յառաջ բերելու կրնային երեսլմանքը փրկել և ցոյց տալ թէ բարենորոգումներու գործադրութեան թուական մը բացուեր է։

Օրմանեանին պատերազմութեան ի վեր միեւնոյն խաղը քանի մը անգամ ալ կրկնուեցաւ։ Պատերազմին այս վերջի հրաժարականը բաւական լուրջ էր։ Օրմանեան հպիսկոպոսը կարծես ալ պարտականութեանը մեծութիւնը կ'ըմբռնէր։ Հայ ժողովուրդը որտապնդեցաւ տեսնելով որ պատերազմը իր պաշտօնին բարձր հեղինակութեամբ կը պաշտպանէր Հայաստանը, մինչև սուլթանին դէմ զուլի բարձրացնելու աստիճան։ Համիտ շուտաւ մնաց ի տես տարօրինակ փոփոխութեան մը նշաններուն։ Տատեան նորէն վրայ հասաւ, ու պատերազմը այլեւս ան մարդը չէր։ Եւ հիմա գարձեալ Եւրոպայի բարձրաձայն կը ծանուցուի թէ բարենորոգումներու թուական մը բացուելու վրայ է. ապացոյց՝ պատերազմին ամբողջ վերադարձը։

Տատեան փաշա միանգամայն կը ջանայ եւրոպական մասնաւոր միջոցաւ հաւատացնել Եւրոպայի թէ Հայաստանի վիճակը սկսած է գոհացուցիչ ըլլալ, թէ սուլթանը Հայոց վիճակը բարեւոյցելու կը հետամտի։ Այդ լիակաւ թերթերէ ուսանց հեռագիրներն ու թղթակցութիւնները իրենց տատանաւառուն ծաղումը կը յայտնեն, ու Հայոց վարչապետը Տեպաի թղթակցին միջոցաւ հայկական գոհունակութիւնը անուղղակի կերպով և կատարելագործեալ վարպետութեամբ Ֆրանսայի կը ծանուցանէր։

Արթին փաշա տալանդաւոր զիւանազան մըն է որ քաղաքական կացութիւնը բաւ կը հասկնայ։ Ինչ որ կը տեսնէ ու կը գուշակէ, իրեն այն համոզումը կուտայ թէ այժմ սուլթանին քաղաքականութեանը կոտորէն ծառայելով կրնայ իր անձնական հանգստութիւնը ապահովել։ Ու Համիտ ալ իր հայ պաշտօնեաներուն մէջ պիտի չկրնայ երեք գտնել ուրիշ մը որ իր Տատեանին չափ իր անձին մէջ միացնէ պերճախօսութեան, վարպետութեան եւ ազդեցիկ հեղինակութեան յատկութիւնն։

ըր, եւ զանոնք գործածէ պատերազմը, պատերազմաբանը, ազդը սուլթանին տեսակետներուն համապատասխանող քաղաքականութեամբ վարելու։

Հայաստանի բարենորոգումներուն խնդիրն դէմ աւելն անոակ արգելք եւ խոչընդոտ անպակաս պիտի ըլլան Պատերազմաբանէն որքան առեն որ Տատեան Արթին փաշա հզօրապէս իշխէ հոն։ Օրմանեան պատերազմը բնածին արամազրութիւն ցոյց կուտայ Տատեանին լուծը շատ թեթեւ ու քաղցր համարելու։ Անստոյգ, երկիւղալից ապագայ մը կը նշմարենք։ Մեղքը Օրմանեան պատերազմին եւ Տատեան Արթին փաշային վիզն է։

Կ ՈՒՍ ԱԿՑ ԱԿՍԵ « ԵՍ » Ը

Թէ՛ երկիրը, թէ՛ արտասահման Հայ մը Հայաստանի վիճակին բարեւոյցմանը աշխատողներուն վրայ խօսած ատեն՝ « Կուսակցութիւնները » կ'ըսէ։ Թրքահայոց քաղաքականութեան պաշտպաններու մասին երբ կարծիք յայտնուի՝ ո՛չ ոք կը մտաբերէ յոգնալի բառ մը գործածել։ « Թրքասէր կուսակցութիւններ » զաղափարը մէկուն միտքը չի գար, իրողութիւնը ինքնին գոյութիւն չունենալուն։ Թրքասէր, կամ պահպանողական, կոչուածները իրականութեան մէջ կը կազմեն հոծ ամբողջութիւն մը որուն կը պատկանին անոնք որ օսմանեան իշխանութեանը քաղցրութեամբ ինչ որ կարելի է ձեռք բերել այնքան բաւական համարելու քաղաքականութեան կողմնակիցներ են։ Վաճառականները թէ՛ Եւրոպա, թէ՛ Պոլիս, թէ՛ Երկիրը կը ջանան որ ո՛չ իրենք, ո՛չ իրենց պաշտօնեաները, ո՛չ ալ իրենց բարեկամները երկրին իշխանութեանը ամենաչնչին քաղաքական դժգոհութիւն մը պատճառելու առիթ տան։ Կառավարական ծառայութեան մէջ գտնուողները իրենց պաշտօնին բերմամբ կը տքնին իշխանութեան վստահելի ըլլալ։ Արհեստաւորները, խանութպանները, զեղացիները, իրենց օրուան հացը ձարելու հետամուտ, կը ջանան այսպէս թէ այնպէս կենսակցիլ երկրին տէրերուն հետ։ Գաւառական առաջնորդները, եկեղեցական պաշտօնեաները զգուշ կը մնան ո՛ր և է կուսակցութեան առիթ հայթայթելու պարագաներէն, որպէս զի կարենան իրենց վրայ ծանրացած պարտականութիւնները գոնէ մասամբ կատարել։ Կ.Պոլսոյ Պատերազմաբանը կը ճգնի վստահելի ըլլալ օսմանեան իշխանութեան, վստահ չի անկէ միայն կը յայտադրէն տառապանքներուն դարձան մը։ Այսպէս ահա թիւրքիոյ մէջ Հայոց զանազան գաղափարները շահերու պաշտպանութեան բնազդովը իրարու միացած են, և իւրաքանչիւր Հայ հանգամանքներուն պահանջներուն համեմատ կը հետամտի իր խեղճ շափուրթ թրքահայոց քաղաքականութեան ծառայելու։

Յեղափոխական Հայերը օրուան ապրելու կեանքէն անպիկ կը նային։ Ազդը օրէ օր թէ՛ բարոյապէս եւ թէ՛ նիւթապէս կը ակարանայ, ու յամբընթաց քայլերով գէպի մահ կը յառաջանայ։ Փրկութեան յոյսը՝ ապահովութիւնը, կ'ըսեն, ուղղակի պատերազմող քաղաքականութեան մէջ պէտք է փնտռել։ Եւ սակայն ընդունելու ենք թէ Յեղափոխութիւնը այսօր թշնամիին անմիջական յաջողութեան ապահովութեամբ զիւարճուելու չափ պատրաստ չէ։ Կատարելապէս կողմ եւ պատրաստ գտնուելու համար պէտք է Յեղափոխութիւնը ո՛չ թէ կուսակցական այլ ազգային ըլլայ։ Այս նպատակին հասնելու առաջին պայմանն է, ինչպէս ցոյց տուինք մեր նախորդ յօդուածովը, որուն վերնագիրն էր « Յեղափոխութեան բնազդը չուր »։ Յեղափոխութեան ծրագրէն զուր հանել այն բոլոր արամազրութիւնները որոնք անմիջական առնչութիւն չունին Հայաստանի վիճակին վարչական բարեւոյցման խնդրին հետ, և Ազդը բաժան բաժան ընելու կը ծառայեն միայն։

Գաղափարի, նպատակի, ծրագրի կատարեալ միութեամբ է որ պիտի կրնանք թշնամիին դէմ ուժգնապէս կռուիլ և յաղթանակել։ Պառակտեալ Յեղափոխութիւնը կը նմանի բանակի մը որ պատերազմի դաշտին վրայ ինքն իր մէջը երկպառակ է։ Իւրաքանչիւր գունդի, իւրաքանչիւր ջոկատի զինուորներէն ամէն մէկը կրնայ անհատապէս խանգալաւ հայրենասէր, կորովալի կարին մը ըլլալ։ Բայց երբ այդ բաշերը մէկ կողմէն թշնամիին դէմ կուտած ատենին միտ կողմէն ալ գնդակ կ'արձակեն իրարու, երբ չունին ռազմական որոշ յատակագիծ մը, պէ՛տք է ապշիլ եթէ շարաշար յաղթութիւն թշնամիէ մը որ իր ամբողջակի գորութեամբը իրենց կը յարձակի, գործադրելով չափուած, գծուած, խորհուած ծրագրեր մը։ Այսօր մեր դէմը ունինք օսմանեան իշխանութիւնը որ վերէն արուած մէկ ուղղութեան մը կը հնազանդի, և կազմակերպուած ուժերով կը կռուի Հայութեան դէմ, որուն բանակը, որ Յեղափոխութիւն կը կոչուի, իր մէջ օձտեալ է։

Ուրեմն Յեղափոխութեան տկարացման զխաւոր պատճառներէն մէկը քաղաքական ծրագրիներու գոյութիւնն է, ու այդ ծրագրիներուն մէջէն ալ այն բոլոր արամազրութիւնները որոնք Ազգային դատին հետ ո՛ր եւ է յարաբերութիւն չունին, և ազդը երկպառակելու կը ծառայեն միայն։ Այսպէս հարկ չկայ կրկին այս նիւթին վերադառնալ. այսօր խօսինք կուսակցական բաժանումներուն վրայ որոնք մեծապէս կը գծուաբանեն յեղափոխական գաղափարին շուրջը ազգային զօրեղ միութեան մը ստեղծումը ի պաշտպանութիւն Հայկական դատին։

Թիւրքիայէն զուրս գտնուող այն Հայերը որոնք Հայաստանի վերածնունդի կը հաւատան, յարած են երկու տարբեր ուղղութեան։ Կայ մաս մը որ կը կարծէ թէ քան տարուան աշխատութիւնները, զոհողութիւնները բաւական համարելով այլ եւս պէտք սպասել Եւրոպայի անխուսափելի միջամտութեանը։ Այս սպասողական քաղաքականութիւնը պաշտպանողները սակաւթիւ չեն, իրենց մտածութիւնը սխալ ըլլալ կամ ճիշդ, նպատակնին միեւնոյն է գործող յեղափոխականներու առաջադրութեան հետ։ Պիտի կրնային ազդել ազգային մտքին և Յեղափոխութեան ընթացքին վրայ, եթէ իբր կազմակերպուած մարմին աշխատէին իրենց գաղափարներուն տարածմանը։ Բայց ձեռնպահ նստած են, ուստի և առայժմ մեզի խորհրդածութեան ո՛ր և է նիւթ չեն հայթայթել։ Գործող յեղափոխականներն ալ յոյսերնին Եւրոպայի վրայ դրած են. սակայն համոզուած են որ Եւրոպան օգնութեան կը հասնի թիւրքիոյ այն ժողովուրդներուն որոնք իրենց իրաւունքները յարաւանող մարտնչութեամբ կը պաշտպանեն օսմանեան բռնակալութեան դէմ։ Արեւելեան խնդրին մէկ գարու պատուութիւնը կատարելապէս իրաւունք կուտայ այս գաղափարը պաշտպանողներուն։ Ասանց ակարութեան ամենամեծ մէկ պատճառը պէտք է փնտռել կուսակցական հերձուածներու մէջ։

Ժողովրդի մը յառաջդիմութեան էն զօրեղ սատարը կուսակցական բաժանումն է։ Այդպիսիները իրենց զարգացումը և ազատութիւնը մեծապէս կը պարտին երկու կուսակցութիւն։ Վայելելու բաղդին։ Ամերիկա զօրեղ է, ազատ և մեծ. հոն երկու կուսակցութիւն կը վարեն երկիրը։ Բայց ինչ պիտի ըլլար եթէ ազատական կամ պահպանողական կուսակցութիւնը ինքն իր մէջ բազմաթիւ ստորաբաժանումներ ունենար, մէկը միւսին հակառակող, ու կուսակցութիւնները գոյութիւն չունին այդ երկիրներուն մէջ երբ արտաքին թշնամիին հետ երկիրը պատերազմի բռնուած է։ Պահպանողականն ու ազատականը, միապետականն ու հանրապետականը մէկ հայրենիքի, մէկ դրօշակի, մէկ բանակի վը ծառայեն։ Հայոց մէջ եթէ ներքի իսկ ըլլար ընդունիլ թէ յեղափոխական մարմին մը քով թրքասէր խօսքի մը գոյութիւնը կրնայ օգտակար ըլլալ, այս երկու բաժանումը պէտք էր բաւական համարել։ Իսկ երբ յեղափոխական կուսակցութիւնը ինքն ալ զանազան կուսակցութիւններու կը բաժնուի բնականաբար կը ջլատուի իր զօրու։

Թեանք մէջ: Այդ բաժանումներուն աղետաբեր հետեանք-
ներէն մէկը քանին թուենք:

Յեղափոխական կուսակցութիւնները իրարու հետ
մրցումի ելլելով, ինքնազոյութիւնը իրենց ծրագրին է-
ական մասը կազմեց: Հայութիւնը մոռցուեցաւ, ու
տեղը կուսակցութիւնը անցաւ: Ազդին անձնուրը այլևս
Հայ չէր այլ այլինչ կուսակցութեան անդամ: Կուսակ-
ցական հայրենասիրութիւն, կուսակցական հերոս, կու-
սակցական քաջութիւն, կուսակցական խելացիութիւն
ստեղծուեցան: Միայն և միմիայն կուսակցական «ես»ը:
Տխուր երևոյթ որուն նմանը մեր պատմութեան ո՛չ հին,
ո՛չ նոր էջերը կ'արձանագրեն: «Ես»ը եթէ անհատա-
կան կեանքի մէջ առելի է, հաւաքական կեանքի մէջ ալ
սիրելի չէ: Հայ ազգը սկսաւ պարզապէս զգուսնել զը-
զալ երբ կուսակցութեանց թերթերէն կը տեսնէր թէ
ամէն քաղաքացիական և անհատական կեանքի առաքի-
նութիւնները կուսակցութիւն մը լոկ իրեն մենաշնորհը
կը համարէր: Հայ ազգը իրաւունք ունէր ինքնագոյ Հայ-
րենասիրութեան վրայ կասկածիլ: Ճշմարիտ հայրենա-
սիրութիւնը համեստ է և լուռ: Այն մարդը որ միշտ
իր բերնին մէջ իր ազգանունը գործունէութիւնը կը յեղ-
յեղէ, հայրենիքին համար ըրած զոհողութիւնները կը
թուէ, սուրբ գատի մը համար իր դիցազնութիւնները
կը հռչակէ, պարզապէս խաբարայ, ստախոս ածալարար
մըն է: Այնպիսին եթէ երբեք բան մըն ալ ըրած ըլլայ,
կ'մ' անգիտակցաբար գործած է առանց հետեանքը
զգալու, կամ շահարկի գործ մը ընել ուզած է ճշմա-
րիտ, անշահախնդիր հայրենասնուէրը կը նմանի մօր վը
որ դաւակնելուն համար իր անձնուրութիւնը երբեք
բերանը չ'առնէր: Հայրենասիրական ինքնագոյութիւնը
եթէ կասկածելի կ'ընէ անհատները, կրնայ նաեւ հա-
ւաքական մարմիններու վրայէն ալ պակեցնել հա-
րային հաւատքը:

Բայց կայ տարբերութիւն մը զոր աչքէ վրիպելու
չէ: Հայոց յեղափոխական կուսակցութիւնները ունե-
ցած են շատ ազնուահոգի անձնուրեր որոնք եթէ նա-
հատական են, յաւիտեան լուռ կը մնան: Եթէ բան-
տեղն են կամ ազատուած՝ բնաւ չեն խօսիր: Իսկ ա-
նոնք որ կեանքերին հանգստօրէն Եւրոպա կ'անցընեն
անոնք են որ նահատակներու, անձնուրերու մօրթին
ու ոսկորէն թմբուկ կը շինեն և կը հնչեցնեն, իրենց
շահուն, իրենց փառքին համար: Թմբակահարները այն-
քան աւելի բարձրագոյ կը հնչեցնեն կուսակցական
թմբուկին օրքան աւելի իրենց իրենց անձին համար
ներդրական մը երգելու նիւթ չունին:

Ընդհանուր տեսութիւնը մասնաւորենք: Հնչակեան
նախկին կեղծումը որ պարագաներու բերմամբ ինքնի-
րենը զոյացած էր, քաջամայն թմբուկ մը ըրաւ թերթը:
Բայց պէտք է դիտել որ Մուշ, Սասուն, Զէյթուն,
Փոքր-Հայքի զանազան կողմերը, Պոլիս գտնուող ըն-
կերները անհատաբար թէ խմբովին երբ հայ յեղա-
փոխականի պարտականութիւններն կը կատարէին, ոչ
ոք իրենցմէ անձնագոյ կը հանդիտանար: Հնարաւոր չէր
սակայն միեւնոյն ատեն թէ՛ երկիրը գործել և թէ Եւ-
րոպա նստող խմբագիրներուն վրայ ներգործել: Երբ
1896 Օգոստոսին Հնչակեան ընդհանուր ժողովը
Լոնտոն գումարուեցաւ, այն օրէն սրտուեցաւ կուսակ-
ցական փառասիրութեան դադարաւ չզօրացնել: Ան-
կէ ի վեր է որ անցեալը կը յիշուի երբ անդուստիքի
հարկ մը կը ներկայանայ առանց կուսակցական սնա-
պարծութեան ո՛ր և է զիտումի: Ուրեմն՝ Հնչակեան կու-
սակցութիւնը Ազգը զէպի դադարաւային միութիւն առաջ-
նորդելու համար նախ յեղափոխական ծրագրէն վերցուց
ընկերակցական տրամադրութիւնները, որոնք հայկա-
կան խնդրին բոլորովին օտարօտի են: Եւսոյ՝ ջնջեց
կուսակցական ինքնագոյութեան քաղաքականութիւնը:
Անշուշտ հայ ժողովուրդը նշմարած ըլլալու է թէ ին-
չափոխական ուրիշ թերթեր ալ առանձն էր ի վեր կ'ըղ-
գուանան ընկերակցական ո՛ր և է քարոզութիւն: Ու
այն օրը որ ինքնագոյութեան հիւանդութիւնէն բուժուին,

մեծ ծառայութիւն մը մատուցած՝ պիտի ըլլան յեղա-
փոխական գաղափարին ու գաղտին:

* * *

Կուսակցական «ես»ը մինչ Ազգը Յեղափոխութե-
նէն և յեղափոխականներէն կը ցրտացնէր, միեւնոյն ժա-
մանակ ուրիշ շարքեր ալ կը ծնէր: «Ես»ը միշտ
պէտք ունի շափազանցութեան, ստախոսութեան, խա-
բարայութեան որպէս զի կարենայ սնանիլ, ապրիլ: Հայ
ժողովուրդը այս ճշմարտութիւնը լաւ ըմբռնած է: Ուստի
երբ կուսակցական թերթի մը մէջ ո՛ր և է մէկուն, մա-
նաւանդ անձանցի մը դրուատիքները կը կարգայ, կը
շուարի թէ հաւատայ կամ ոչ: Ներքողեալը թերեւս ճշ-
մարտապէս արժանաւոր է ամէն գովասանքի, բայց կա-
րելի է որ բացառիկ ո՛ր և է արժանիքէ մը զուրկ ըլլար
և գուցէ մինչև իսկ ամենատարբեր արարած մը: Ընթեր-
ցող հասարակութիւնը թերեհաւատ դանդաղութեամբ
պատճառներ ունի: Չենք ուզիր, գոնէ այսօր, աչքի
զարնող քանի մը օրինակներով խօսիլ: Իսկ ամբաս-
տանութիւններն ալ այլևս նշանակութիւն մը չունին:
Հայ մը կրնայ իրաւունք ամենամատթար արարածին մէկը
ըլլալ ու ժողովուրդը զիրաւ չհաւատայ անոր գլխուն
բարդուած մեղադրանքներուն, կասկածելով որ թերեւ շատ
լաւ մարդ մըն է և կուսակցութեան մը շահերը կը
պահանջեն զայն արատաւորել:

Կուսակցական թերթերու մէջ երեցած թէ՛ դրուա-
տիքներու, թէ՛ թշնամանքներու համար ժողովրդին թե-
րեհաւատութիւնը ոչ միայն Յեղափոխութեան, այլ և ամ-
բողջ Հայութեան համար դժբաղդութիւն մըն է:

Էն մեծ ժողովուրդներն իսկ, որոնց հետ մենք ո՛չ
մօտեն ո՛չ ալ հեռուն կրնանք բաղդատուիլ, միշտ պէտք
ունենցիր են ազգային մեծ զեմքերու որպէս զի իրենք
ալ բարոյապէս գործնաւոր: Յեղ մը ինքզինքն այնքան ա-
ւելի ուժեղ, այնքան աւելի կազդուութեամբ կը զգայ օրքան
աւելի մեծ տաղանդներ, բարձր առաքինութիւններ ծնի:
Ի տես իր այդ գաւառներուն ազգ մը ինքն իր վրայ մեծ
հաւատք կ'ունենայ, վասն զի անոնք ժողովրդի մը ժա-
ռանգական յատկութիւններուն վրաներն ու ապացոյց-
ներն են: Մեծ ժողովուրդներու մէջ կուսակցութիւն մը
կը պանծայ հակառակ կուսակցութեան մը մէջ գտնուող
մեծ մարդերով: Կլատաթոն ազատական կուսակցու-
թեան պետն էր, ու պահպանողականներուն զէմ կանդ-
նած էր իր ամենաուժեղ հակառակորդ մը, ու այդ պահ-
պանողականները, իր անդիմացի, առաջինն են պարծե-
նալու այդպիսի մեծ անձնատրութեան մը համար: Հա-
յոց մէջ, ու աւելի ճիշդ արտասահմանի Հայոց մէջ,
նկարագիր, տաղանդ, բարոյական լոկ կուսակցական սե-
փականութիւններ կը համարուին: ու ինչ որ տեղի է,
տեղաւ է, վատթար է, կը պատկանի հակառակ կուսակ-
ցութեան: Հարկ է սակայն յայտարարել թէ այս մտա-
ւորական պաշտկութիւնը թիւրքիոյ Հայոց անձանցի էր:
Ժընէվցիները եղան որ ուղեցին կուսակցամոլական ան-
արդարութիւնը: մեր բարեբերուն մէջ մտցնել: Իրաւէ որ
բիշ մը յաջողութիւն ունեցան, բայց մեր զգացումները
կ'ապստամբին այդ հայաստան ձգտումին զէմ, որ ուշ
կամ կանուխ պիտի անհետանայ: Լաւագոյն է կանուխ
ջնջել: Կուսակցամոլութիւնը միշտ պիտի մթաւնէ մեր
մաքին ու սրտին աչքերը: Որքան ատեն որ չըրժ-
ուինք այդ ակտէն, միշտ ամէն բան սխալ պիտի տես-
նենք, գէշը՝ աղէկ, աղէկը՝ զէշ, ծուր՝ շիտակ, շի-
տակը՝ ծուր:

Ու ո՛րն է այն ժողովուրդը որ հայ ազգին շափ պէտք
ունենայ իրականութիւնը ճիշտ ու ճիշտ տեսնելու: Նպա-
տակ մը ունինք որուն կ'ուզենք հասնիլ, և չունինք ա-
ռաջնորդող մարմին մը, պաշտօնատուն մը, պետ մը
որ զիտէ, քննէ, զեկամարէ: Ազգը ինքն է իր նախա-
բարութիւնը: հանրային կարծիքն է, ազգային զգացումն
է, ժողովրդին սրատեսութիւնն է որ պիտի տեսնէ, քննէ,
խմանայ և ըստ այնմ շարժի: Ու երբ Հայութեան աչքը
կուսակցամոլական ակաւն վարակուած չիլ է, ապշելու
չենք որ աղէտները չեն պակսիր մեր գլխէն, ու չենք

կարող յառաջանալ կէտադրեալ նպատակը:

Յեղափոխական կուսակցամոլութեան Հայաստանի,
Հայ ազգին, Հայկական գաղտին պատճառած բոլոր ա-
ղէտները ո՛չ մէկ, ո՛չ երկու յօգուածի մէջ ամփոփել կա-
րելի է: Հետզհետէ առիթը ներկայացած ատեն զեռ կը
խօսինք: Հայոց ողջամիտ մասը այլևս կատարելապէս
համոզուած է թէ առանց կուսակցական սպիտի ու մր-
ցումին Հայութիւնը այսօր շատ տարբեր վիճակի մէջ
պիտի գտնուէր:

Հնչակեան կուսակցութիւնը կ'աշխատի հետզհետէ
Ազգին մէջ տկարացնել յեղափոխական կուսակցամոլու-
թեան զգացումը, օրինակը նախ ինքն իր վրայ տալով:
Մրցումի գաղափարը այլևս մեր մաքէն չ'անցնիր: Մըր-
ցումը հանրային կեանքի մէջ եռասիրութեան եւ փառա-
սիրութեան համընթաց է: Իր փրկութեանը հետամտող
ժողովուրդ մը նպատակը միայն աչքին առջեւ պէտք է
ունենայ, անհատական կուսակցական ամէն նկատում,
ներքէ ազատ մնալով: Կը հաւատանք թէ պիտի գայ օր մը
որ Հայաստանի վիճակին բարւոքումը ցանկացողները, ան-
հատներ ըլլան թէ մարմին, մէկ ծրագրով պիտի գործեն
հանգիւյթ թշնամի մը որ իր մէջը բաժան բաժան չէ եւ
իրը միաձոյլ զանգուած մը կանգնած է Հայութեան զէմ:
Իցի՛ւ թէ ուշ չ'մայրինք:

ԿՈՒԻ ԵՒ ԱՐԻԻՆ ԱՆԵՂՈՒԹԻՒՆ

ԷՐԶՐՈՒՄԻ ԿՈՒՍԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Տօքթօր Պէլք, Փաքը-Ասիա ուղեւորող Գերմանա-
ցին, սրուն արկածները Բիւրտերուն հետ քանի մը ամիս
առաջ առիթ տուին զիտանալական լիցիակցութեանց
գերման դեսպանատան եւ Դրան միջեւ, կը հեռագրէ
«Յրանքիւրը Յայթունկ» թէ մանր խոսակցութիւններ
տեղի ունեցեր են Էրզրում ընդ մէջ հայ ապստամբ խում-
բերու եւ Բիւրտերուն:

Ըստ տքթ. Պէլքի, նախադարձաւ Հայերն եղած են.
ասոնք կը փախաբն եղեր Մուշի հարաւային կողմը
տեղ մը երթալ, առաջնորդութեամբ Սաքօ (՝) անուն անձի
մը, եւ հոն թաղաւորութիւն (՝) մը հաստատել: Երկու կող-
մէն 50 հոգի մեներ են: Չինուորական զօրութեան մի-
ջամտութեամբ, հանդարտութիւնը վերահաստատուէր է:
Սաքօ եւ իրեններէն հինգ հոգի իրենց ընկերներէն մասնը-
ուելով թակարդի մը մէջ ինկեր եւ սպաննուէր են:

Տքթ. Պէլք կ'աւելցնէ թէ հայ ապստամբները ոռւս
զինուորներու հրազեններով սպառազինուած էին, և թէ
պարտուած ապստամբներու մէկ մասը ոռուսական հողը
փախեր է: Գերմանացիին հեռագիրը կը վերջնայալ գո-
վասանական վկայութիւններով Էրզրումի կուսակալին
համար, եւ կը ժխտէ թէ ո՛ր և է կոտորած տեղի ունեցած
ըլլայ:

Լոնտոնի Տէյլի Գրօնիքի Պերլինի թղթակիցը այս
տեղեկութիւնները նոյեմբեր 16ին հաղորդելով իր թեր-
թին կը յաւելու թէ այս հեռագրէն իր ստացած տպա-
ւորութիւնը այն է թէ Էրզրումի կուսակալը Տքթ. Պէլքէն
խնդրած ըլլալու է այս տեղեկութիւնները Եւրոպա հա-
ղորդել: եւ անշուշտ մեծ արկունահեղութիւն տեղի ու-
նեցած ըլլալու է, ու թիւրք պաշտօնեաները կը ջանան
զաղանի պահել:

Դարձեալ նոր աղէտ մը Հայաստանի գլխուն, դարձեալ
անհուն վիշտ մը հայ սրտերու: Այս դժբաղդութեանց վրայ
խօսելու համար թէ և պէտք է սպասել աւելի ընդարձակ
տեղեկութեանց, բայց ասոնք ձգրտապատում ստու-

գուծեամբ պիտի չհերկայացուին, գոնէ առ այժմ: Հիմալուց սակայն կրնանք հաւատալ թէ Էրզրումէն մինչև Մուշ, լայն տարածութեան մը վրայ հայ գեղեր մոխիր պարծած ըլլալու են, ու հայ հոգը անգամ մը եւս հայ արիւնքով ողորդուած է: Ո՞վ պիտի յայտնէ ճշմարտութիւնը: Թիւրք իշխանութիւնը, Եւրոպան, Հայոց Պատարարքարանը, կարգ մը Հայեր ամենքն ալ շահ ունին ճշմարտութիւնը խեղաթիւրելու, ծածկելու, և ստուերները շահագործելու:

Թիւրք իշխանութիւնը գործ կը սիրէ եւ ոչ թէ խօսք. երբեք սնապարծ չէ երբ Հայերը կը կոտորուին, Հայաստանը կ'աւերէ: «Հայկական խնդիրը ջնջելու համար Հայերը ջնջելու է»՝ քաղաքականութիւնը անողորմ հաստատմամբ կը գործադրուի. ու ուղիւսով յաջողութեան համար Դուր նախ յուսնութեան պէտք ունի, կ'ըզգուշանայ յիմարամիտ սնապարծութիւններէ, և կը հետաւորէ ճշմարտութիւնը սքողելու: Յետոյ իր բոլոր եղեւ, նախործութեանց պատասխանատուութիւնը Հայոց վրայ բարդելու կը հետամտի, իրեն վերապահելով ներդրումիս և հայրախնամ իշխանութեան մը խաբեպատիր տիտղոսը: Քաղաքականութեան խոհեմութիւնը կը պահանջէ Եւրոպայի հանրային կարծիքին յուզման ո՛ր եւ է առիթ չը հայթայթել:

Մեծ տէրութիւնները Դուրն շնորհապարտ կը մնան այս խելացի և խոհեմ վարժունքին համար: Վեց կառավարութեանց մեծ ծանօթող մը պիտի ըլլար այս միջոցի Եւրոպայի հանրային կարծիքին գրգռումը ի նպաստ Հայոց: Եւրոպա ծանրածանր կնճառութիւններով զբաղած է, ու Արեւելեան խնդիրը թմրած, մարած կ'ուզեն պահել: Եւ Թիւրքիայէն ալ առեւտրական, ճարտարաւործական, սեղանաւորական այնքան բազմապատկառ շահեր կ'աշխարհեն որ չեն ուզեր սուլթանին հակառակել: Իրարու հետ կը մրցին սրպէս զի սուլթանին հաճոյակատար հանդիսանան:

Պատրիարքարանին կազմակերպութիւնը յայտնի է: Դուրն պաշտօնեաներէ բաղկացած քաղաքական ժողով մը իրեն առեւտրական ունենալով Տատեան փաշան, եւ նախագահ՝ կառավարար Օրմանեան պատրիարքը, ճիշդ մը հանելու ո՛չ կարող է, ո՛չ ալ փափաքող:

Եւրոպա նստող կուսակցականներ և իրենց թերթերը հաւանորէն պիտի աշխատին, ինչպէս անցեալին մէջ նոյնպէս եւ այժմ ալ, իրողութիւնները կուսակցական շահերու համեմատ ներկայացնել: Ճշմարտութիւնը իրենց պատապարտութիւնը կրնայ ըլլալ: Իրենց գրչին տակ, իրենց բերնին մէջ ընտելեալ գեղերն են որ հիմա անբարկներու հոյտ մը ներկայացնեն, բերաններն են որ Հայոց հրացաններն լեզուապատա փակեն, ցիւր ու ցան եղեր են, ու թիւրք իշխանութիւնը սարսափահար մնացիր, եւ Խուլթանը իր գահուն վրայ ստաներ է: Այս սիրտը ծանրանալով իրենց սքանչելապէս կը ծառայեն Դուրն հայալիքը քաղաքականութեանը: Երբ Հայերը իրենց կը հրատարակեն թէ իրենց յայրենական եղած են, աւերք աւրշակեր են քիւրա գեղերը եւ հայաժական վարած են թշնամիները, ալ ևս ոչ ոք սուլթանին գիտութիւնը ներկայացնելու իրաւունքը կրնայ ունենալ. պատասխանին հայ թերթերէն կը ստանան: Տարակոյս չկալ թէ պետութիւններն ալ գոհ կը մնան Հայոց կողմէն իրենց բնձնուած այս օժանդակութեանը համար: Աւելցնելով թէ Պատրիարքարանին վրայ զանաւեւ, իրող պատրիարքը և քաղաքական ժողովի անգամ, ջերմ յեղափոխութիւններ. ինչ պիտի կրնային ընել առանց եթէ Դուր իրենց բողոքներուն գէթ հանէր Եւրոպա հրատարակուած այն թերթերը որոնք Հայոց յաղթական քաջութիւնները կը պանծացնեն: Յուսանք թէ գոնէ այս անգամ մեր այս նկիւղութեանց մէջ սխալած ըլլալու բաղդատու թիւեր ունենանք:

Բ Ա Ն Տ Ա Ր Կ Ե Ա Լ Ն Ե Ր Ը

Օրմանեան պատրիարքը հրատարականը ետ առնելուն առթիւ նահանգներու բանտերէն ՏԱՀայ պիտի արձակուէին: Ասոնց գոնէ մեծ մասը հիմա ազատ են: Թէև կենսապահական տեղեկութիւն մը չհաղորդուեցաւ թէ նախապէս ինչ քաղաքական յանցանքի համար դատապարտուած էին այդ «ներսեան արժանացողներ», սակայն առանց վարանելու կրնանք հաւատալ թէ կը պատկանին այն խեղճերու գաստկարգին զոր յետին ոստիկան մը իսկ երբոր ուզէ բանտը կը նետէ, առանց եւ ոչ իսկ չնչին պատուաւի մը: Այս համոզումին կը հաստատուի երբ կ'իմանանք թէ նահանգներու և Պոլսոյ բանտերը հազարներով լեցուած Հայերը ինչ ծանր ոճիւրներու համար չեն կրնար եղեր պատրիարքին վերադարձին առթիւ «կայսերական ներսեան արժանանալ»: Այս բանտարկեալներուն գրեթէ ամենքն ալ առանց ո՛ր եւ է դատարանի ներկայանալու դատարանները նետուած են ու կը փախան, կը հիւժեն: Երբ կը շնչենք դատական ձեւակերպութեանց ջնջումին վրայ, մտքերնուս չ'անցնիր ենթադրել թէ թիւրք պատարան մը կրնար արդարապատ ըլլալ: Օրինական զաւեշտի մը ներկայացումն իսկ անհնարին է այդ բանտարկեալներուն համար: Դատարանները որքան որ ալ սուլթանին հրամաններուն հպատակիլ ուզեն քայքայ և աշխուշ շուարած պիտի մնան երբ ընդհանուր պատախազը իրենց աջիւ պարզէ ձերբաւարկներուն վրայ ծանրացած ամբաստանութիւնները:

Երկու օրինակ բաւական պիտի ըլլան գաղափար մը տալու համար թիւրք պաշտօնեաներու շարաւիտ ապուշութեանը վրայ: Մեծ քաղաքի մը մէջ հայ վաճառական մը ամիսներէ ի վեր բանտը կը մնայ, որովհետեւ կառավարութիւնը բռներ է անոր առեւտրական մէկ նամակը որ երկու խորհրդանշան տառեր կը պարունակէ եղեր, Յ. Գ. Ոստիկանութիւնը այս երկու տառերուն բանալին ուզած է իմանալ. վաճառականը կը պատասխանէ թէ Յեւ-Գրութեանին կառնառաւութիւնն է: Բայց թիւրքը չի գիտեր թէ Յեւ-Գրութեան ինչ կը նշանակէ. Բանիչը կը հարցնէ որ միթէ նամակին սկիզբը Նախ-Գրութեան գրած էր որ վերջն ալ Յեւ-Գրութեան գրեւ: Ու այսպէս ահա, այդ երկու խեղճ տառերը որոնք աշխարհիս ամէն կողմը ընթացիլ թղթակցութեանց մէջ կը գործածուին, թիւրք իշխանութեան համար յեղափոխական դադանքներ կը պարունակեն: Ուրիշ հայ մըն մէկ նամակին մէջ խօսելով իր առեւտրական վիճակին վրայ «գեթադաբար» բառը գործածեր է: Այս ալ մեծ յանցանք մը կը համարուի, վասն զի Թիւրքիոյ մէջ ոչ ոք գեթադ է: Այս խեղճ հայն ալ վեց ամիս է որ բանտն է ու իր բոլոր գործերը վերջնապէս կանապէս խանգարուել են:

Երբ այսպիսի չնչին պատճառներով ձերբաւարուած ենք իսկ չեն արձակուիր բանտէ, դիւրին է մտածել թէ ազատ ձգուողները ինչ տեսակ յանցանքներ ըլլալու են:

Հայոց պատրիարքը լրջաբար ձեռք պիտի առնէ բանտարկեալներուն խնդիրը թէ ոչ: Այս հարցումին պատասխանը շատ լրջաբար կը սպասուի Գուժ-Գարուէն:

Այս գիտենք թէ կան կարգ մը բանտարկեալներ որոնք թրքական օրէնքով աւելի կամ նուազ առաժաճառ քաղաքական յանցանք կը համարուին, ու առանց ողորդութեան համար դատարանութիւններ կը ներկայանան: Բայց երբ Հայոց պատրիարքը իր աթոռը վերադառնալուն պայման կը դնէ բանտարկեալներու ազատութիւնը, անտարափոյս կ'ըմբռնուի թէ թիւրքերուն կողմէն քիչ թէ շատ լրջաբար քաղաքական յանցանքներ նկատուածները աչքին տուելու ունին իսկ երբ և ոչ իսկ կը փրկուին ևս ախարարամիտ ամբաստանութիւններու պատճառով շարժարտողներն անգամ, Օրմանեան պատրիարքը պէտք է բռնէ թէ հայ ազգը ինչ պիտի մըտած իր վերադարձի պարագաներուն նկատմամբ: Քա-

ղաքական բանտարկեալներու արձակման պահանջումը Հայոց պատրիարքին էն նուիրական պարտականութիւններէն մէկն է, եւ իրեն գոհացում կը տրուէր եթէ հաստատամիտ արիւթեամբ պնդել գիտնար: Հիմալ որ աթոռին վրայ է, կը սպասենք այդ արիւթիւնը տեսնել:

Այս առթիւ պատրիարքին կը յիշեցնենք որ 1897 օրոտտոսին Պոլսո ռմբաձգութեան մը փորձին առթիւ բարտարկուած քանի մը երիտասարդներուն անմիջական արձակումը օրուան խնդիր ընելու անմիտելի իրաւունքը ունին: Եւրոպայի մը համաձայն մը ամփոփենք:

Եւրոպայ 1897ի կոտորածին առթիւ ցմահ բանտարկութեան պատապարտուած երեսուն երկու իսլամները իրենց ազատութիւնը վերստին ստացան Օրմանեան պատրիարքին վերադարձին առթիւ: Այդ եղեւնաւորները մահուան դատապարտուած էին նոյն իսկ թիւրք իշխանութեան կողմէն: Եւրոպայի կոտորածը այնքան մեծ զայրոյթ պատճառած էր Եւրոպայի որ սուլթանը հարկապարտեցաւ քննիչ յանձնաժողով մը զրկել և խիստ վճիռներ արձակել տալ: Բայց երբ Եւրոպա ակնդէտ կը պատէր տեսնել թէ այդ վճիռները պիտի դորձադրուին թէ ոչ, ու սուլթանը նեղ վիճակի մէջ էր, ահա Պոլսո քանի մը միամիտներ ուրաձգութեան փորձ մը կ'ընեն, կը ձերբաւարուին, մահուան կը դատապարտուին: Սուլթանը փութաց այս հայերուն մահուան դատապարտութիւնը ցմահ բանտարկութեան փոխել, պայմանաւ որ նոյն տնօրէնութիւնը պիտի ընէ Եւրոպայի եղեւնաւորներուն համար ալ: Փոխանակութիւն մը կատարուեցաւ: Եւ հիմալ որ Եւրոպայի իսլամ եղեւնաւորները ազատ կ'արձակուին, հարկ է որ ցմահ բանտարկութեան դատապարտուած այն հայ երիտասարդներն ալ ազատ արձակուին: Ոչ միայն արդար ալ օրինական պահանջում մըն է աս:

Ն Ո Ւ Ի Ր Ա Տ Ո Ւ Ո Ւ Թ Ի Ի Ն

Գաթիքի Հեղափոխական Մարտնչիկը ստացած է հետեւեալ նշանակաւոր անունները ողջ դահլիճով.

Յ. Օշին 197 Դոշ. Հրատ 20, Տապար 20, Հրազտան 10, Զարմայր 10:

Հրատի ձեռքով՝ Ներսէս 15, Ապարտ 10, Հոյժի Գարաբաղ 10, Կայծակ 5, Արմենակ 5, Սարմակ 5:

Օշինի ձեռքով՝ Նորայրի խոշորէն 10:

Մարտնչիկի ձեռքով՝ Ֆեյզուլի 30, Հայկ Լուսինեան 15, Վրեժիկի 15, Վանէ 10, Դեմրակ 10, խոշորէն խոշորով 10, Գայլ Վանէ 5, Սիրասուն 5, Վառլուան 5, Սիւրմա 5:

Հաւաքուածք 457 դահլիճով ողջ:

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ վերաբերեալ նամակ ու բաժնեզին զրկել առ

L. FRANK,
32, CHESTERTON ROAD,
(ENGLAND) LONDON, W.

ՆՈՐ ԿԵԱՆՔԸ կը հրատարակուի ամէն ամսու 1 Ին և 1 Տին: Բաժնեզինն է Եւրոպայի համար տարեկան 10 և վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար տարեկան 2 և վեցամսեայ 1 տոլար:

ՏԳՈՐԱՆ ՀՆՁ. ԱԶԳ. ԹԵՂ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ